

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| | |
|--|--|
| <p>Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը</p> | |
| <p>Դերը՝</p> | <p><i>Կատարում է էլեկտրոնային հաշվողական մեքենաների տեխնիկական և ծրագրային սպասարկում և նորոգումը: Հավաքում և կարգաբերում է ապարատածրագրային միջոցները: Բրականացնում է լուրջ ցանցերի տեխնիկական և ծրագրային սպասարկումը:</i></p> |
| <p><u>Խնդիրների բնագավառները</u></p> <ol style="list-style-type: none"> 1. էլեկտրոնային հաշվողական մեքենաների տեղակայում 2. էլեկտրոնային հաշվողական մեքենաների ծրագրերի տեղադրում 3. էլեկտրոնային հաշվողական մեքենաների անխափան աշխատանքի տեխնիկական և ծրագրային ապահովում 4. Համակարգչային ցանցերի անխափան աշխատանքի տեխնիկական և ծրագրային ապահովում 5. Համակարգչային տեխնիկայի կիրառման բնագավառներում տարբեր՝ տիպային, ստանդարտ, կառավարող, մշակող, սպասարկող ծրագրերի ներդրում և փորձարկում 6. էլեկտրոնային սարքերի և հեռահաղորդակցման համակարգերի հավաքմանն ու նորոգմանն առնչվող տեխնիկական խնդիրների լուծում | |
| <p><u>Խնդիրների բնագավառ 1. էլեկտրոնային հաշվողական մեքենաների տեղակայում</u></p> | |
| <p>Աշխատանքային գործընթաց</p> | <ul style="list-style-type: none"> - հավաքում է համակարգիչ առանձին տարրերից և հանգույցներից պարզագույն կամ լայնացված կառուցվածքով - տեղադրում և միացնում է էլեկտրոնային հաշվողական մեքենաների՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները - նախապատրաստում և գործարկում է էլեկտրոնային հաշվողական մեքենաների - ստուգում և հսկում է էլեկտրոնային հաշվողական մեքենաների աշխատանքը - տեղադրում և գործարկում է կառուցվածքային ծայրամասային սարքավորումները - ստուգում և հսկում է կառուցվածքային ծայրամասային սարքավորումների աշխատանքը |
| <p>Կատարման չափանիշները</p> | <p>էլեկտրոնային հաշվողական մեքենաները ճիշտ են տեղադրված և միացված</p> <ul style="list-style-type: none"> • էլեկտրոնային հաշվողական մեքենաների գործարկված են և աշխատում են անխափան • ծայրամասային կառուցվածքային սարքավորումները ճիշտ են տեղադրված |

| | |
|---|---|
| | <p>և գործարկված</p> <ul style="list-style-type: none"> կառուցվածքային ծայրամասային սարքավորումների աշխատանքը ստուգված է և հսկվում է |
| <p>Խնդիրների բնագավառ 2. Էլեկտրոնային հաշվողական մեքենաների ծրագրային ապահովում</p> | |
| <p>Աշխատանքային գործընթաց</p> | <ul style="list-style-type: none"> տեղակայում և գործարկում է էլեկտրոնային հաշվողական մեքենաների աշխատանքն ապահովող ծրագրերը տեղակայում և ստուգում է կառուցվածքային ծայրամասային սարքավորումները սպասարկող ծրագրերը իրականացնում է էլեկտրոնային հաշվողական մեքենաների աշխատանքի անվտանգության ծրագրային ապահովում |
| <p>Կատարման չափանիշները</p> | <ul style="list-style-type: none"> էլեկտրոնային հաշվողական մեքենաների աշխատանքն ապահովող ծրագրերը տեղակայված են և աշխատում են անխափան կառուցվածքային ծայրամասային սարքավորումները սպասարկող ծրագրերը տեղակայված են և աշխատում են անխափան |
| <p>Խնդիրների բնագավառ 3. Էլեկտրոնային հաշվողական մեքենաների անխափան աշխատանքի տեխնիկական և ծրագրային ապահովում</p> | |
| <p>Աշխատանքային գործընթաց</p> | <ul style="list-style-type: none"> իրականացնում է համակարգչի նախնական ստուգարքային թողարկում ակնհայտ և ոչ ակնհայտ արատները հայտնաբերելու նպատակով հայտնաբերում և առանձնացնում է վնասված հանգույցը՝ պահպանելով անվտանգության կանոնները |
| <p>Կատարման չափանիշները</p> | <ul style="list-style-type: none"> ակնհայտ արատը հայտնաբերված է և մեկուսացված է ոչ ակնհայտ արատը հայտնաբերված է և հնարավորության դեպքում կատարված են նորոգման աշխատանքներ |
| <p>Խնդիրների բնագավառ 4. Համակարգչային ցանցերի անխափան աշխատանքի տեխնիկական և ծրագրային ապահովում</p> | |
| <p>Աշխատանքային գործընթաց</p> | <ul style="list-style-type: none"> տեղադրում և մոնտաժում է ցանցային սարքավորումները նախապատրաստում է ցանցային սարքավորումների շահագործման աշխատանքները |
| <p>Կատարման չափանիշ</p> | <ul style="list-style-type: none"> լոկալ ցանցի մոնտաժային աշխատանքները ճիշտ կատարված են ճիշտ կատարված են ցանցում գտնվող համակարգիչների կարգավորումները |
| <p>Խնդիրների բնագավառ 5. Համակարգչային տեխնիկայի կիրառման բնագավառներում տարբեր՝ տիպային, ստանդարտ, կառավարող, մշակող,</p> | |

| Ծրագրերի ներդրում և փորձարկում | |
|---|--|
| Աշխատանքային գործընթաց | <ul style="list-style-type: none"> - կարգավորում է համակարգչի BIOS-ը - թեստավորում է համակարգչային հանգույցները համապատասխան ծրագրերի օգնությամբ - տեղադրում է ըֆտրված օպերացիոն համակարգը համակարգչում - տեղադրում և կարգավորում է տիպային ծրագրեր - պահպանում է տարբեր՝ տեքստային, գրաֆիկական, թվային ինֆորմացիա |
| Կատարման չափանիշները | <ul style="list-style-type: none"> • Bios-ը կարգավորված է ըստ համապատասխան համակարգչային անձնագրի • համակարգչային հանգույցների թեստավորումը ճիշտ է կատարված, հանգույցները գտնվում են աշխատանքային ռեժիմում • օպերացիոն համակարգը ճիշտ է տեղադրված • բոլոր տեղադրված ծրագրերը աշխատում են անխափան • տարբեր՝ տիպային, ստանդարտ, կառավարող, մշակող ծրագրերի աշխատանքը հսկում է • տարբեր՝ տեքստային, գրաֆիկական, թվային ինֆորմացիաները ճիշտ է մշակում, գրանցում և պահպանում ընտրված կրիչների վրա |
| <u>Խնդիրների բնագավառ 6.</u> Էլեկտրոնային սարքերի և հեռահաղորդակցման համակարգերի հավաքմանն ու նորոգմանն առնչվող տեխնիկական խնդիրների լուծում | |
| Աշխատանքային գործընթաց | <ul style="list-style-type: none"> - կարդում է էլեկտրական կառուցվածքային, սկզբունքային սխեմաները և կոնստրուկտորական գծագրերը - հաշվարկում է էլեկտրական շղթաների պարամետրեր - կազմում է չափողական սխեմաներ - ընտրում է ռադիոտարրեր էլեկտրոնային սարքավորումների համար - մոնտաժում է էլեկտրական սխեմաներ - չափում է էլեկտրական շղթաների պարամետրերը - կարգաբերում է հավաքված սխեմաները |
| Կատարման չափանիշները | <ul style="list-style-type: none"> • էլեկտրական կառուցվածքային և սկզբունքային սխեմաները ճիշտ է կարդում • կոնստրուկտորական գծագրերը ճիշտ է կարդում • էլեկտրական շղթաների պարամետրեր ճիշտ է հաշվարկել • չափողական սխեմաները ճիշտ է կազմել • էլեկտրոնային սարքավորումների ռադիոտարրերը ճիշտ է ընտրել • էլեկտրական սխեմաները ճիշտ է մոնտաժել • էլեկտրական շղթաների պարամետրերը ճիշտ է չափել |

| | |
|---|---|
| | <ul style="list-style-type: none"> • հավաքված սխեմաները կարգաբերել է |
| Գիտելիքը | <p>աշխատանքի պաշտպանության տեխնիկայի անվտանգության, արտադրական հիգիենայի և հակահրդեհային պաշտպանության կանոնները և չափորոշիչները,</p> <p>ժամանակակից էլեկտրոնային հաշվողական մեքենաների հիմնական բնութագրերը,</p> <p>անհատական համակարգիչների կառուցվածքը, բաղադրիչները,</p> <p>էլեկտրոնային հաշվողական մեքենաների և նրա սարքավորումների կառուցման սկզբունքները,</p> <p>էլեկտրոնային հաշվողական մեքենաների ծայրամասային սարքավորումները, նրանց աշխատանքի սկզբունքը, նրանց կազմում մտնող մեխանիկական հանգույցները,</p> <p>ինֆորմացիայի մշակման պրոցեսը էլեկտրոնային հաշվիչ մեքենայում, փաստաթղթերի միասնական համակարգի հիմնական դրույթները, յուրահատկությունները, օպերացիոն թաղանթների և սպասարկող ծրագրերի կիրառման առանձնահատկությունները,</p> <p>համակարգչային ցանցերի սահմանումը և նշանակությունը, համակարգչային ցանցերի ապարատային և ծրագրային հանգուցային հասցեավորում</p> |
| Կարողությունները, հմտությունները | <ul style="list-style-type: none"> • ապահովել արտադրական գործընթացում տեխնիկայի անվտանգության և աշխատանքի ու շրջապատող միջավայրի պաշտպանություն, • հավաքել անհատական համակարգիչ, միացնել ծայրամասային (մուտքի, ելքի) սարքավորումներ, • հավաքել լոկալ ցանցեր • ապահովել կապը ցանցային սարքավորումների միջոցով • կատարել մոնտաժային աշխատանքներ, • ձևակերպել փաստաթղթեր, • կարգաբերել հաշվողական համակարգերի առանձին սարքավորումների շահագործման պարամետրերը, • տեղակայել ժամանակակից օպերացիոն համակարգեր, սպասարկող և կիրառական ծրագրեր, • աշխատել ժամանակակից օպերացիոն համակարգերով և կիրառական ծրագրերով, |

**«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԵՎ ՆՈՐՈԳՈՂ ԷԼԵԿՏՐԱՄԵԽԱՆԻԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

«Էլեկտրոնային հաշվողական մեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում» մասնագիտության «Էլեկտրոնային հաշվողական սարքավորումներ սպասարկող և նորոգող էլեկտրամեխանիկ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են.

1. Համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները ենթակա են անվերապահ յուրացման: Դրանց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեստային հարցման միջոցով: Թեսթը բաղկացած է վերոնշյալ ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից՝ ընդհանուրը 20 հարցից: Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեստային առաջադրանքի հարցերի առնվազն 95% - ին:

2. Մասնագիտական կարողությունների ստուգման համար պահանջվում է առաջադրված էլեկտրոնային հաշվողական մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման գործընթացի կազմակերպման աշխատանքային ծրագիր՝ ընդգրկելով ստորև նշված գործողությունները.

- ապահովել արտադրական գործընթացում տեխնիկայի անվտանգության և աշխատանքի ու շրջապատող միջավայրի պաշտպանություն,
- հավաքել անհատական համակարգիչ, միացնել ծայրամասային (մուտքի, ելքի) սարքավորումներ,
- հավաքել լոկալ ցանց,
- ապահովել կապը ցանցային սարքավորումների մջջոցով,
- կատարել մոնտաժային աշխատանքներ,
- ձևակերպել փաստաթղթեր,
- կատարելագործել հաշվողական համակարգերի առանձին սարքավորումների շահագործման պարամետրերը,

- տեղակայել ժամանակակից օպերացիոն համակարգեր, սպասարկող և կիրառական ծրագրեր,
- աշխատել ժամանակակից օպերացիոն համակարգերով և կիրառական ծրագրերով,

Արդյունքը համարվում է բավարար, եթե վորոնշյալ գործողությունների առնվազն 90% - ը կատարվել է չափորոշչով նախատեսված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոններն ու նորմերը: